ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. մարտի 13- 15-ը Ուզբեկստանի Հանրապետություն (ք. Տաշքենդ) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Լևոն Խալիկյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ուզբեկստանի Հանրապետություն (ք. Տաշքենդ)

13.03.2018թ-15.03.2018թ.

4. Հրավիրող կողմը՝

Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի ստանդարտների բյուրո:

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցելու Ուզբեկստանի Հանրապետության մայրաքաղաք Տաշքենդում կայանալիք ԱՊՀ անդամ երկրների ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի չափագիտական վերահսկողության, միջպետական չափանիշների և տեխնիկական կանոնակարգերի պահանջների նկատմամբ վերահսկողության և հսկողության գիտատեխնիկական հանձնաժողովի 24-րդ նիստին:

6. Քննարկված թեմաները՝

«Միջպետական խորհրդի անդամ երկրների օրենսդրության ներդաշնակեցման նպատակով՝ տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության սկզբունքների և մոտեցումների մասին» համաձայնագրի նախագծի քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման շրջանակներում քննարկվել են մի շարք հարցեր.

- Մինչև 2020թ-ը, միջպետական խորհրդի զարգացման ռազմավարության կանոնակարգերի իրացման նպատակով, միջպետական խորհրդի 2016-2020թթ գործողությունների ծրագրի քննարկում,

- Հսկողության-վերահսկողության ոլորտում պետական հսկողության և վերահսկողության մարմինների կողմից կիրառվող գործող փաստաթղթերի արդիականացման և բարելավման քննարկում,
- Պետական վերահսկողության ոլորտի մասնագետների որակավորման բարձրացման և ուսուցման նպատակով սեմինար պարապմունքների ընդլայնում՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ,
- 2019-2020թթ ժամանակաշրջանի համար միջպետական ստանդարտների և չափագիտական վերահսկողության տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նպատակով վերահսկողության և հսկողության ոլորտում ստուգվող օբյեկտների ցանկի մշակման քննարկում՝ ըստ առաջնահերթ ուղղվածությունների:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի անդամ-երկրների օրենսդրության ներդաշնակեցման նպատակով՝ տեխնիկական կանոնակարգերի չափանիշների և կանոնների պահպանման պետական հսկողության (վերահսկողության) մոտեցումների և սկզբունքների համաձայնագրի նախագծի մշակում: Հանդիպման արդյունքում մասնակից երկրների պատվիրակների կողմից ստորագրվել է 24-րդ նիստի արձանագրությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվել է.

- Հաշվի առնելով կայացած քննարկումը՝ Բելառուսի Հանրապետությանը՝ գիտատեխնիկական հանձնաժողովի հերթական նիստին ներկայացնել վերոնշյալ համաձայնագրի մշակված նախագիծը:
- Քննարկել և միջպետական խորհրդի ստանդարտների բյուրո ներկայացնել 25-րդ նիստի անցկացման հնարավորության վերաբերյալ առաջարկություն:

10. Գործուղվողը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Լևոն Խալիկյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

17.03.2018թ.